

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ. Տէլէֆօն № 253.

Բ Ա Յ Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ԱՌԱՋԻՎԱԾ 1901 ԹԻԱԿԱՆԻ

ՄՇԱԿ

(29-ՐԻ ՏԱՐԻ)

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՍԱՆՈՒԹԵՐՈՐԴ ԼՐԱԳՐԻ

«ՄՇԱԿԸ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ

Ա մ են օր բացի տօներին յաջորդող օրերին.

ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐԻՆԸ. «Մ շ ա կ ի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն մասովանը՝ 9 ռ., ինն եւ ութ մասովանը՝ 8 ռ., եօթ մասովանը՝ 7 ռ., վեց մասովանը՝ 6 ռ., հինգ մասովանը՝ 5 ռ., չորս մասովանը՝ 4 ռ., երեք մասովանը՝ 3 ռ., երկու մասովանը՝ 2 ռ. եւ մի մասովանը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ա մ եր կ ա յ ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 ռուբլի. Եւ ռ օ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պ ա ռ ս կ ա ս տ ա ն ի բաժանորդները 10 ռուբլի:

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՐԱԿԱՆԱԿԱՆԸ (Բաղադրանայա եւ Բարձրակարգ փողոցների անկիւն):

Կայտութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, եւ առճաստակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է գրվել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

Ա Պ Ա Ռ Կ Բ Ա Ճ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Չ Է Ը Ն Դ Ո Ւ Ն Վ Ո Ւ Մ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Գործնական լուծում.—Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Բաղադրանայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀՆՈՒԳՐԻՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Հայկական սպառնալիցներ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ

Թիֆլիսի քաղաքային դուման իր վերջին նիստում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, դեկտեմբերի 11-ին, մի նպատա-

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Տրանսպարտայի այս բացարձակ տիրապետութիւնը, ի հարկէ, չէր կարող նախանձ չը յարուցանել Ազգայնութիւնների եւ շահերի հաւասարակշռութիւն պահպանելու համար, միւս պետութիւններն էլ սկսեցին գործել նոյն ուղղութեամբ: Ժամանակի ընթացքում նրանցից իւրաքանչիւրը առանձին-առանձին սկսեց բարեկամական դաշինքներով իրաւունքներ եւ արտօնութիւններ ստանալ իր նպատակների համար, ստեղծել իր շահերը Թիւրքիայում: Այլ եւս անկարելի պիտի լինէր հաւաքել ամբողջ Եւրոպան մի խաչակիր դրօշակի տակ օսմանցիների դէմ: Ընդհանուր համաձայնութիւն եւ զաղափարական եղբայրակցութիւն կայացնել չէր կարելի մի տեղ, ուր շահերի ընդհարում կար, ուր ամեն մէկը պիտի ձգէր տիրապետող դիրքը ստանալ: Բայց արեւելեան հարցը, այսինքն քրիստոնեաների ազատութեան հարցը քաղաքական այս նոր դրութեան մէջ չէր ոչնչանում: Թիւրքիան, իբրեւ մի զինուորական բռնապետութիւն, յաճախ ընդհարվում էր իր հարեան պետութիւնների հետ եւ այդ պատերազմների ժամանակ արժարժվում էր նրա լուծի տակ ճնշված ժողովուրդների հարցը: Այսպէս, 1571 թւականին զէջ էր մնում, որ կատարվին Առաքել Բաղիշեցու եւ միւսների դաշակութիւնները. Վենետիկի, Սպանիայի եւ Գերմանիայի միացած նաւատորմները Լեպանոսի ծովածոցում ոչնչացրին Թիւրքաց բոլոր նաւերը: Կիսաբաժանի խորտակումը ահաւոր էր. քրիստոնեաների ազատութեան այդ մեծ յաղթութեան հետեւանքը պիտի լի-

կայարմար որոշում կայացրեց, որի առիթով կարեւոր ենք համարում ասել մի քանի խօսք:

Մի տասնեակ տարի սրանից առաջ Թիֆլիսի ազգայնակութիւնը գտնվում էր մշտական վտանգի մէջ վնասվելու այն մտքի, որ նա գնում էր վաճառանոցից: Այդ միւս նախօրոք չէր ենթարկվում հետազոտութեան, ուստի հիւանդ եւ վնասուած միւս անարգել ծախվում էր վաճառանոցում: Մասնաւոր շատ վտանգաւոր էր խոյրի միւսը, որ յաճախ պարունակում է իր մէջ արիւնխաղի եւ զանազան տեսակ ճիճուների բուշեր:

Ներքին ինչպէս պատում էին, Կ. Պոլսի ազատումը, բայց դաշնակիցները չը կարողացան օգուտ քաղել իրանց աջողութիւնից եւ Թիւրքիան նորից օտքի կանգնեց:

Պատերազմների մշտական բնուէր եւ Թիւրքիայի հիւսիսային սահմանազուխը, ուր օսմանեան արշաւանքները ընդարձակում էին Աւստրիայի, Ռուսիայի, նոյն իսկ Լեհաստանի հետ: Եւրոպային մշտական վտանգ էր սպառնում այդ կողմից արդէն մի անգամ Սիւլէյմանը իր զօրքերը հասցրել էր Վիեննայի պատերին: Աւստրիան ամեն ջանք գործադրում էր, որ դոնէ հիւսիսային ազգերի մի դաշնակցութիւն հանէ Թիւրքական հարուածների դէմ: պայքը համոզում էր ռուսներին մասնակցել այդ դաշնակցութեան մէջ, բայց նրանք դեռ հետո էին պահպանում Բերլինի յախճաթի բռնապետութեան դէմ թշնամական գործողութիւններ սկսելու մտքից: Դաշնակիցներ որոշեց քրիստոնեայ պետութիւնների համար եւ այն, որ կիսաբաժանի խորտակման լաւ միջոց կարող են դառնալ նրա երկաթէ բռունցքի տակ ճնշված քրիստոնեաները: Եւ աշխատում էին ռուսի կանգնեցնել, ռազմիկ ոյժ դարձնել այդ հարստահարված սարուկներին: XVI դարի վերջերս միակնեան Թերակղզու հիւսիսային մասերում, Դոնայ գետի ափերին, տեղի ունէր մի ազատական շարժում: Վենետիկի եւ Հոլանդի գործակալները պատրաստում էին քրիստոնեաների ապստամբութիւն: Դերերը բաժանված էին, որովհետ էր թէ ինչ ծրագրով պիտի բարձրվի եւ ինչպէս պիտի գործէ ապստամբութիւնը, զէնքերի պաշար էր պատրաստված *):

Այսպիսով, եթէ Թիւրքիայի զբքը միջազգային շահերի շնորհիւ աւելի եւ աւելի ամրանում էր, քրիստոնեաների ազատութեան

*) Жигаревъ т. I. кр. 77.

Քաղաքային ինքնավարութիւնը, հաստատելով մի նախօրոք հետազոտութեան կարգ ու կանոնները, կատարեց մի կարեւոր առողջապահական գործ եւ ազատեց ազգայնակութիւնը այն հիւանդութիւններից, որոնք կարող էին առաջանալ վնասակար մի գործածութիւնից: Դա անպայման գեղեցիկ նորմալութիւն էր: Բայց այդ կարգադրութեամբ քաղաքային ինքնավարութիւնը մի ծանր եւ անտանելի վիճակի մէջ գրեց մասվաճառներին եւ անտանալաճառներին: Հիւանդ եւ անտանելի միւս անմիջապէս ոչնչացվում է յատուկ վտարաններում, որոնք շինված են այդ նպատակով: Ազգայնակութիւնը ազատվում է վտանգից, բայց մի տէրը զրկվում է իր ապրանքից եւ ընկնում է մեծ վնասների մէջ:

Այդ դրութիւնը անընդունելի էր: Պէտք էր միջոցներ որոնել ապահովելու մասունքներին: Եւ հաջ քաղաքային դումայի վերջին նիստին ներկայացված էր մի ծրագիր այդ անյարմարութեան առաջն առնելու համար: Ծրագիրը սահմանում է վարձատրութիւն այն միւս համար, որ պէտք է ոչնչացվի սպանդանոցում եւ այդպիսով ազատում է մասվաճառին նիւթական վնասից: Իսկ վարձատրութեան համար անհրաժեշտ գումարը հայթայթելու նպատակով ծրագիրը նշանակում է մի որոշ տուրք, որ պէտք է վերջվի սպանդանոց մտած իւրաքանչիւր անասունից, օրինակ 12 կոպէկ ամէն մի եզան կամ կովի համար, 2 կոպէկ հորթի, 1 կոպէկ ոչխարի եւ 40 կոպէկ խոզի համար: Այդ տուրքից գոյացած գումարը այնքան մեծ է, որ կարող է հեշտութեամբ ծածկել այն բոլոր ծախքը, որ կը պահանջվի ոչնչացրած մի արժէքը վճարելու համար:

Այդպիսով լուծվում է մի հարց, որ զբաղեցրել էր վերջին տարիներս Թիֆլիսի քաղաքային ձայնաւորներին: Դումայի

հարցն էլ նոր կերպարանք էր ստանում: Սարկացած ազգերը չը պիտի նստէին իրանց տեղը եւ սպասէին թէ երբ խաչակիր զօրքեր կը գան ու իրանց կաղապեն, այլ պիտի իրանք էլ կուէին: Այսպէս էր որոշվում իզամի հպատակ քրիստոնեայ ազգերի ճակատագիրը, եւ դա մի անդառնալի վճիռ էր, որ բղխում էր մարդկային ցեղի պատմութեան ոգուց: Երկար ժամանակ Եւրոպան ազատութեան յոյսեր էր տալիս այդ չեղբորի, զգալու, ազատելու յոյսեր, որոնց իրագործողը պիտի լինէր պետութիւնների քրիստոնեական եղբայրակցութիւնը: Բայց երբ անհնարին դարձաւ մի այդպիսի ազատարար եղբայրակցութիւն կազմելը, նոյն Եւրոպան սկսեց ներշնչել քրիստոնեաներին թէ յուսա, այնու ամենայնիւ, պէտք է, բայց այսուհետեւ յոյսը իրագործողը պիտի լինեն նախ եւ առջ իրանք այդ ստորակ քրիստոնեաները, իրանց ապստամբութիւններով:

Եւ յայտնա սկսեց աշխատել միջինի համբերատարութեամբ: Ոչ աստուածաառք պատերազմիչ չեղբորով, ոչ մասնակցական ժի ահազին դարգացումը, ոչ մասնակցական լուծի անտանելի ծանրութիւնը, ոչ նոյն իսկ այն միութիւնները, որոնք առեւտրական եւ քաղաքական նպատակներով կապվում էին խաչի եւ կիսաբաժանի մէջ, չը մարցնէին այն կայծերը, որոնց մէջ փայլում էր ստրկութիւնից ազատվելու ակնկալութիւնը: Ժողովուրդները զարբեր ընթացքում արժարժում էին իրանց սրտի մէջ այն կրակը, որ ապագայում պիտի հրդեհէր Օսմանի բռնապետութիւնը դաշնակցի կողմերից: Այդ դարաւոր պատրաստութիւնները մէջ առաջաւոր տեղը բռնում էին յոյսերը:

Ահռելի աղէտը, որ Կ. Պոլսի աւերակների տակ թաղեց բազմաթիւ զանգ, բարբարոսական արշաւանքները, որոնք ամայացրին հին Ելլազան, տասնեակ հազար դիակները, հա-

ընդունած ծրագիրը կը հանդուստայնէ անտանալաճառութեամբ զբաղող անձանց եւ կը նպաստէ կանոնաւորութիւն մտցնել այդ արհեստի մէջ: Ռուսաստանի քաղաքներից շատ բերն են ընդունել այդ նորմալութիւնը, որոնց թւումն է Օրեստան:

Մեր Անդրկովկասեան միւս քաղաքները կարող են օգտվել Թիֆլիսի փորձից եւ օրինակ վերցնել նրանից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Անցեալներում ուսու դրողների դաշնակցութեան ընդհանուր ժողովում մի զեկուցում կարգադրեց գաւառական մամուլի դրութեան մասին: Այդտեղ այն միտքն էր յայտնված, թէ գաւառական մամուլը զարգանալ կարող է մայրաքաղաքի մամուլի աջակցութեամբ, մինչդեռ մայրաքաղաքը անուշադիր է դէպի գաւառները եւ, կարելի է ասել, մի տեսակ արհամարհանքով է վերաբերվում գաւառական մամուլին: Բարձրացրած հարցի առիթով Պետերբուրգի լրագրիչները սկսեցին մի վիճարանութիւն. մի քանիները սկսեցին արգարայնել մայրաքաղաքի հրապարակախօսներին, ասելով թէ նրանք միտ բարի ցանկութիւններ են ունեցել իրանց գաւառացի եղբայրակիցների վերաբերմամբ, միւսները գաւառական մամուլի համար որոշում էին նեղ ու համեստ չըջանակներ—տեղական եւ միայն տեղական պէտքերին ծառայելու: Այդպիսի դատողութիւնները մի բան էին ապացուցանում—այն, որ մայրաքաղաքի մամուլը իսկուհու չէ ճանաչում գաւառական մամուլը, նայում է նրան բարձրից, կարծում է թէ միայն իրան է տուած մեծ, ազդեցիկ, զեկակարող լինելու արտօնութիւնը: «Вѣстникъ Европы» ամսագիրը ասելի լայն ու աւելի արդարացի հայեացք ունի գաւառներում գործող մամուլի մասին: Նա ասում է, թէ տեղական շահերին գաւառական մամուլը կարող էր ծառայել մի առանձին օգտակարու-

րիւրաւոր կոյսերն ու աղանքը, որոնք տարվեցան Մէլէմէ II-ի հարեմը, ցաւ, արտասուածք ու հառաչանք էին պատճառում: Երկրվաճնները տեղի էին տալիս յաղթողներին, խոնարհվում էին նրանց առաջ, բայց կար եւ ապրում էր յոյսը թէ այդ աւերակների տակից մի օր պիտի յարութիւն առնէ յունական անկախութիւնը: Այդ յոյսը չէին կարող խլել նուաճողները, որովհետեւ նա երգ էր, որ անդադար չնջում էին սարկայաճների չըթուցները: Յոյն ժողովուրդը հնուց ունէր բազմաթիւ երգեր, որոնց մէջ խոսում էին սէրը, ընտանեկան կեանքը, ծէսերը, պատմութիւնը: Անկախութիւնը կորցնելուց յետոյ այդ երգերի մէջ մտնում է մի զօրաւոր, անմեռ շեշտ—հայրենասիրութիւն, ազատասիրութիւն: Յոյսերի զինուորական դասակարգը թիւրքաց նուաճումներից յետոյ անցաւ Եւրոպայում էր եւրոպական զօրքերի մէջ: Այդ ապական պանդուխտները մի նշանաւոր կայմակերպութիւն ստեղծեցին եւ երգեր յօրինեցին, որոնց մէջ զրված էին անցեալի աւանդութիւնները, սէր դէպի հայրենիք եւ ազատութիւն *): Բայց բուն Յունաստանում էլ պակաս չէին այդ տեսակ երգերի նիւթեր:

Հիւսիսային Յունաստանի, Մակեդոնիայի, Թրակիայի եւ Ալբանիայի սարերում կազմվում էին աւազակային խմբեր, որոնց նպատակն էր վնասել Թիւրքերին: Դրանք հաշակաւոր կլէֆտներ էին, հարստահարված ժողովուրդի յոյսն ու ապաւենելու Թիւրքական կեղեքումների դոները եւ առճաստակ ամեն մի ազատասէր տղամարդ հնաճում էին հայրական տանից, զէնք էին վերցնում, դառնում պայլիկար (ուճեղ կտրիճ), կլէֆտը, վառված մի անհայտ թշնամութեամբ Թիւրքերի դէմ, քաջագործութիւններ էր կատարում, իսկ ժողովրդական երգիչը պատմում էր նրա գործե-

*) Грегоровиуъ, кр. 360.

այդպիսի բժշկի տունը զանգի, և հեկեկալով հետապա, ափի մէջ պինդ սեղմած արմատախիլ արած առողջ առանձնը Սա մի կատարված փաստ է, մի անհերքելի, վերին սասկանան անպատուարեր թէ բժշկի և թէ հիւանդանոցի հաստատութեան համար: Եթէ համարարանական բարձր կրթութիւն ստացած բժիշկը նոյնպէս թող է տալիս իրան այդպիսի անբարեխիղճ վերաբերվել զէպի իր ստանձնած պարտականութիւնը, ապա ուրեմն ինչ տարբերութիւն նրա և սափրիչի մէջ: Խնդիրն այս չէ, թէ կատարելագործութեան և քաղաքակրթութեան ինչ չափ ու սահման կայ սափրիչի «քայլաթիւնի» և բժշկի ատամ քաջելու մեքենայի մէջ, այլ ինչ արհեստը որքան զիտակցարար, լուրջ և բարեխիղճ կերպով է գործադրվում: Այն, ինչ որ կարող է կատարել մեքենան սափրիչի ձեռքով, չը պէտք է կատարէ «քայլաթիւնը» բժշկի ձեռքով:

Ստան. Դաւթեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

II

Կարս, դեկտեմբերի 5-ին

Էջմիածնից մեկնելու օրս երկու հոգի դալիս են Կաղզուանից և նկարագրում ժողովրդի վրդովմունքը: Լսող չէ լինուած Պարոնի հետ գնացողներէջ մինը մի շարքով առաջ Կաղզուան է աննում մեր հայտնութեան կոնգրատ, տալիս մի քանի անգամ դառարեցրած և կրկին պատժի տակ եղած անգրագէտ 110 տարեկան Յովհաննէս քահանային, որին այս անգամ աղաբարեբարի հետադարձ աւետում է, որ աւագ քահանայութիւն է արվել, իսկ փոխանորդին էլ Կարսից հեռացրել են: Շտապում է պատարագ մատուցանել, յատկապէս աննակաբող աղաչի արեւշատութեան նուիրելով պատարագը: Հնարաւորութիւն չունենալով կարողուած ձեռագիր կոնգրատ, կանչում է մի աշխարհականի, բարձրագույն սեփական և առանց գործակալի տեղեկութիւն տալու՝ ուզում է կարգայնել ան, սակայն գործակալ քահանան արգելում է հարապետական կոնգրատի այդ տեսակ ընթերցումը՝ մանաւանդ որ ոչ մի կարգադրութիւն ստացած չէ լինում այդ մասին: Վերադառնում է Կաղզուան, կարգում և կոնգրատ պատշաճաւոր հանդիսատեսութեամբ, բացատրում է ժողովրդին խաղաղութեան հրաւերում, սակայն հակառակ է տեղի ունենում, որովհետեւ ժողովրդի կողմէն ինքնա ի վերաբերվում է սկզբում ակամայ, իսկ այժմ բռնի բարբարիւն:

Տեղի են ունենում նորանոր զորքեր զորված քարհատների, սայլապանների և անընդհատ դանդաղներից ձանձրացած ոտտիկանութեան կողմից և քննիչ է նշանակվում Երևանի վիճակի փոխանորդ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեան, որը ժողով կայացնելով նոյն ժամերի 10-ին, առաջարկում է ժողովրդին յայտնել իրան վճարը հայտնութեան փորձի անաղոտութիւնից յետոյ: Ժողովը, չորս ձայնի բացառութեամբ, բարոյական մի նոր և փառաւոր ապակի է իջնցում հրաշխի բարեբարի երեսին և վնասում նրան իր հասարակական գործից, վճարելով բաւարարութիւն տալ նրա՝ օրինական կերպով ապացուցված պահանջներին, իսկ չինութիւնն աւարտել իր միջոցներով: Սրբազան քննիչը, քաղաքապետութիւնից հարկադրված մնում է բարեբար աղաչի տանք և պահանջում է ծախսածների հաշիւը և, առանց կարեւորելու, ներկայանում են նրան 27,000 ռուբլու մի ցուցակ թերթի մի երեսին գրված: Սրբազանը հաստատում է, առանց իսկական հայեցողի քննութեան մէջ մտնելու և հետեւեալ կիրակի օրը՝ պատարագից յետոյ, նա, որ խոստանալի էր իր սեփականութիւնից օգնութեան համար ժողովրդին և երբէք թող չը տալ, որ որ և է աղա բանալի նրա իրաւունքների վրա, կանգնում է և երգվում եկեղեցու մէջ, որ աղա բարեբարը ծախսել է 27,000 ռուբլու, որպիսի գումարը կանխիկ ներկայացնելուց յետոյ միայն ժողովուրդն իրաւունք կունենայ իր ձեռքը աննկող չինութիւնը: Հասարակութեան կատաղութիւնը հասնում է իր գագաթնակէտին, սրբազանը ստիպված է լինում թողնել եկեղեցին և հեռանալ ժողովուրդը պատրաստակամութիւն է յայտնում ներկայացնել պահանջած գումարը նախ տկամայ, ապա բռնի և այժմ չարչի բարեբարին, միայն պահանջում է, որ մասնագէտների ամենաբարձր գնահատութիւնից յետոյ՝ երբ պարզվի թէ պարտքը քանի հազարով է ծախսածից աւելին ցոյց տալիս, պարտաւորի իւրաքանչիւր հազարի զէմ ինչպէս հազար աւելի տուգանք տալ իր այդ նոր չարչիական սիրաւորութեան համար եկեղեցու շինութեան պէս մի գործուն: Ժողովուրդը զոր է աշխատում համազօր սրբազանին, որ ծախսը հնգապատիկ աւելի է ցոյց տուած, որ կան գործի մէջ եղած և բոլոր ծախսերին ծանօթ մարդիկ, որ աւարտելու զէպցում չարչի բարեբարը աւելի մեծ պահանջներ կարող է անել և այն և այլն: Սրբազան քննիչը մնում է անողոք և կարգադրութիւն է անում շինութեան վերաբերութեամբ և յայտնում է մարմնաւոր իշխանութեան, որ գործը թողնում է պարտին կարծելով որ մարմնաւոր իշխանութիւնը այդ տեսակ կարգադրութեան պատգամ կը

համար իրան ժողովրդից վերջին անգամ պատգամաւորութիւն էր գնացել էջմիածին, որի հետեւանքը զեռ յայտն չէ: Բայց որքան տեղեկութիւն ունենք, անաղոտութեան հանդիպած զէպցում ժողովուրդը մտադիր է դատարանով վերականգնել իր իրաւունքը: Անա առ այժմս գործի համարում նկարագրութիւնը, իսկ թէ ինչ կը լինի այսուհետեւ, այդ մտիկ ապագայում կը տեսնենք:

Միմիայն մի քանի հարց կուղէի տալ մեր պատուարժան հայրերին և պ. բարեբարին և լսել Պր. Բարեբար, ժողովրդի չինածի վրա չորս շարքից աւելին աւելացրել էք: 2) Մի հազար երկու հարիւր վաթսուս և երկու ռուբլուց աւելի վճարել էք երկաթների, որից զեռ մաս 350 ռուբլու երկաթեղէնը ստացված չէ: 3) 1760 ռուբլուց աւել վճարել էք քարտանքներին և պատ շարժաններին, որոնց վրա էր և մշակի վարձը: 4) Վեց խորանարդ սառնիցի աւելի աւագ զննել էք (96 ռ.). 900 ռ. աւելի փայտ և տախտակ զննել էք, մի բան, որ այժմանից փոխադրել էք ձեր անձնական գործերի, որովհետեւ եկեղեցին հաղի 300 ռ. փայտեղէնի կարիք ունենայ: 5) 115 ռուբլուց աւելի վճարել էք ստաղձագործին: 6) 350 ռ. 50 կողմէկից աւելի տուն էք յեմնարի, որի մի մասը ձեր ջրաղացների համար ուղարկեցիք: 7) 350 ռուբլուց աւելի տուն էք երկաթագործների և բանտրների: 8) 1500 ռուբլուց աւելի քար զննել էք և կարող էք աւելին աւելացնանել: Գննիլ հարիւր պուզ կիր էք տարել եկեղեցու ունեցածից ձեր ջրաղացի շինութեան համար և բաժանել այս և այն անձանց: Մինչդեռ ձեր ծախսածի գումարը հազիւ 6,000 ռ. է հասնում, ինչ երեսով դուք ժողովրդից 27,000 ռուբլու պահանջեցիք: 28 ռ. որ էջմիածնում առում էիք, որ 48,000 ռուբլի էք ծախսել, ինչպէս 21,000 ռուբլին պակասեցրեք քննիչի գաղտը յետոյ:

Իսկ դուք, պատարժան հայրեր և եղբայրներ, ձեր ամբողջ կենքի ընթացքում երբ և երբ հետաքրքրվել էք թէ Կարսի վիճակի որ դիւղն է առանց եկեղեցի, որտեղ է չինվել այն և ինչ միջոցներով: Զեզ երբ և երբ հետաքրքրվել էք այդ վիճակի այս կամ այն եկեղեցու շինութիւնը: Դուք միջամտել էք Նոր-Թիկիսի, Իւզդըբանի, Աշտուղի, Աշտուղի, Գիւրաբաբի, Գիւրաբաբի, Բաղարանի, Բերթուսի և Կալկոսի եկեղեցիների շինութիւնների: Ինչպէս շտապեցիք այդպիսի գործունեութիւն ցոյց տալ հարուստ աղայի շարունակած Կաղզուանի հայ հասարակութեան եկեղեցու շինութեան գործում, ունակովս անելով մի ամբողջ համայնքի զգացմունքն ու իրաւունքը: Ո՞վ է ծխական եկեղեցու իրաւունքը. որ օրէնքով է լսվում մի հասարակութիւնից իր եկեղեցու շինութեան գործը և որտեղ է այդ օրէնքը: Ինչպէս կարող էք երաշխաւորել, որ վեց հազարի զէմ այժմս քսան և եօթ հազար պահանջողը վաղը 120,000 չի պահանջի հասարակութիւնից: 12 սաժէն երկաթութիւն և 7 սաժէն լայնութիւն ունեցող և կէսից չարունակած եկեղեցու համար: Ինչ զգացմունքից զրգրված է չինում չարչի բարեբարը այդ եկեղեցին: Եթէ ի մեր ժողովրդի, ինչպէս է համարձակվում թէլի այդ ժողովրդի և նրա հոգեւորականների վրա եթէ կրօնական զգացմունքներից էրգրված, հապ ինչպէս է այդ տարաբաղ եկեղեցին նրա համար հաւատ և հոգի հայոցիւն: ասպարէզ դարձել (ասպարէզված երջմական քննութեամբ): Եթէ հէջն այնպէս, յանուն բարեբարութեան, հապ ինչու գոհ չէ ոչ մի աշխատաւորը:

Ես համոզված եմ, որ այս տողերը յանդիսութիւն համարվելով մեր եկեղեցական երարւիտայի մէջ տիրող կարգերի զէմ, ազատ չը պէտք է մնա՞ զաւերից, բայց ճշմարտութիւն թաղանթն ինձ աւելի է սանջնում ու նուրբ, քան դաւերի երկիւղը: Ես կուզէի լսել այս հարցի վերաբերութեամբ անն մի զգայուն սիրտ և խիղճ ունեցողի կարծիքը, որին և սպասում եմ որով գուցէ առաջն անվի այն վտանգաւոր կացութեան, որպիսին հետեւանք կը լինի պատշաճաւոր իշխանութեան անվճարակամութեան և մի ամբողջ հասարակութեան ձայնը խեղդելու անօգուտ և գուր փորձերի:

Նամակ վերջացրել էի, երբ «Մշակի» 225 և 226 համարներում կարգադրել երիցս վնասված բարեբարի վարձկան գրչակի բարբառանքները: (Ինքը, պարտքը հաստիւ ազգանունը ստորագրել գիտէ): Երբ է հաստատութեան անաղաղիւր Ս. Իսահակի տաճարը Պետերբուրգում մի հարիւր տարեց աւելի էր շինվում, ուրեմն ճիշդ ծանոթ է հաստատութիւն նրա յատակագիծը: Պարտք առաջ առում էր, որ հասարակութիւնից իրան հանրագրով խնդրել են, բայց Մակար և պիկտորոսի ժամանակվայ պատգամաւորութեան օրըը նորութիւն է ինձ համար էլ և իր համար էլ: Պարտք ինքն է երկաթների գնել, պ. Մատաղանի միջոցով փողերը վճարել և երկաթներն էլ իր գործակատարի միջոցով

ստացել, որի ստացականներն իր մօտն էին մինչև սեպտեմբերի 20-ը և այժմս էլ իր մօտն են: Թէ որքան մաքրաբարան է և ինչո՞ք ներին անաղաղ, այդ մասին պէտք է հարցնել ամբողջ Կաղզուանի հասարակութեան և երգվող ու յուրումներ տուող վկաներին, արհեստաւորներին, պ. Ալլանգրեանին և այլն և այլն: Թէ որքան խաղաղաւոր է, պէտք է հարցնել Կաղզուանի բժիշկներից, նախկին քննիչից և ուստիկանութիւնից, որոնք արձանագրել են պարտի սպանութեան փորձը և վկայել: Պարտի սիրագործութիւններին վերաբերելով գործերը նորութիւն չեն և այս օրպէս կան և նախնական դատարանում և դատախազի մօտ և ուստիկանութեան և ինձ մօտ: Նրա ստատաձեռնութեան մասին պէտք է հարցնել հէջն իր արիւնակից անձներից, որոնցից մի քանիսը մինչև այսօր գանգատվում են հրապարակով, որ իրանց զրկել է, իսկ միւսները զէպ ըստով են իրանց սեփականութիւնը ստացել պարտից:

Գալով նրա առատաձեռնութեանը իմ վերաբերութեամբ և ինձ ունիկ տալու և կարելու խնդրին, նա եթէ կարծելու ընդունակութիւնից և խղճից զուրկ չը լինէր, երբէք իրան թող չը պէտք է տար այդ տեսակ լայնը զըրպարութիւնը, որովհետեւ իմ սեփականութիւնից եկեղեցու շինութեան վրա ծախսածներս նոյններէ 14-ին միայն ստացայ Սուքիաս արքեպիսկոպոսի, Մկրտիչ Բիշարեանի, Մովսէս Քիսայանի և ուրիշների ներկայութեամբ, որպիսին երբէք ցանկութիւն չունէի նրանից ստանալու և համաձայնեցի սրբազան հօր մի ամբողջ ժամայ ընթացքում կրկնված խնդրանքից և հրամաններից յետոյ: Սակայն պարտի բարբառանքներ իսկութիւնը, ուղարկած հեռագրները և այլն կը պարզվին դատարանի առաջ, որին դիմել եմ, որովհետեւ պարտը ճշմարտութեան մասին տարրական հասկացողութիւն, կարմրելու ընդունակութիւն և խղճի խալթը շատ վաղուց է կորցրել ըստ իս:

Գալով Կաղզուանի հայ հասարակութեան, և կարծում եմ, անն ոչ կը վկայ, որ ամիսների ընթացքում ես միայն աշխատել եմ զպիկ ժողովրդի զարթոյնը և միմիայն խաղաղարար պաշտուծ մարել և եթէ փոթորիկը հէջն յունիսին չը բռնկվեց պարտի զէմ, զբանով միմիայն ինձ է պարտական ճշմարտութեան մասին թող խօսի ինքը, հայ հասարակութիւնը: Սակայն ամեն բանի չափ ու սահման կար և այդ շատ փայլուն կերպով ցոյց տուց իր պատուի նախանձանդիցը Կաղզուանի հայ հասարակութիւնը և, մի քանի վարձկանների բացառութեամբ, երբէք անգամ այնպիսի բարոյական սպառնի իջեցրին անզուգական բարբարի երեսին, որ անվնջելի կը մնայ հայ տարբարութեան մէջ և գեղեցիկ օրինակ նման հերոսների:

Փոք. Կարսի վիճակի՝ Ե. Վ. Մուրադեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Վերջին ժամանակ Ռուսաստանի զանազան ծայրերից, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, խնդիրներ են ուղարկվում Պետերբուրգ, որոնցով անյապաղ օգնութիւն է խնդրում անբերրութիւնից վնասված աղաքանակութեան համար Պետերբուրգում արգէն կազմել է մի խումբ, որի անդամները կարճ ժամանակից յետոյ մտադիր են անձամբ ուղեւորվել վնասված շրջանները՝ տանելով իրանց հետ փող, հագուստ և այլ կարեւոր իրեղէններ:

Թիֆլիսում Խարկովից տեղեկութիւն է ստացվել, որ այնտեղ յանկարծամահ է եղել հարաւարեւմտեան երկաթուղիների տեսուչ ինձնեք իշխան Արիստոմ Պետրովիչ Բեհարեանց: Հանգուցեալը երբեմն ծառայում էր Կովկասում անըրկովկասեան երկաթուղու կառուցման ժամանակ, և մինչնոյն ժամանակ ձայնաւոր էր Թիֆլիսի քաղաքային դումայում:

«Տարազ» շաբաթաթերթը հաղորդում է, որ մանկավարժ Սեղբակ Մանդիլեան, որ գնացել էր Դանիա բժշկիկու, աւելի ծանր վիճակի ենթարկվել, կորցնելով տեսողութիւնը: Այժմ պ. Մանդիլեան երկու աչքով կայ է, ծանրաբեռնված ընտանիքով և ներթափանց նեղ վիճակի մէջ:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ինֆուէնցյա տարափոխիկ հիւանդութիւնը շատ սաստկացել է Պետերբուրգում. քաղաքի մի քանի մասերում թղթակցութիւններ և նախնական չեն կարողանում իր ժամանակին հասցնել, որովհետեւ նամակաւոր պաշտօնեաներից շատերում աշակերտների երրորդ մասը հիւանդ են, և դատարաններում մինչև անգամ երկու զաս չէ լինում օրական ուսուցիչների հիւանդութեան պատճառով:

Ներքին գործերի մինիստրութեանը դիմում են վարչական և հասարակական շատ հիմարկութիւններ և թոյլտուութիւն են խնդրում օգտվելու համառուական ժողովրդագրութեան թակակն ցուցակներից: Մինիստրութիւնը այդ խնդիրներին բաւարարութիւն է տալիս:

Հարաւային Ռուսաստանի հանքագործները միջնորդութիւն են յարուցանում, որ թող արվի նրանց օգտվելու հանքարերում կաւաւաւորների շախտանքով:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը տեղեկացրեց ուսումնարանական շրջաններին, թէ զանազան տնտեսութիւններ և կրթական զբօսանքներ կազմելու աշակերտների համար պէտք է կատարվեն կիրակի կամ տօն օրերը, այսինքն այն ժամանակը, երբ աշակերտները ազատ են զբաղմունքներից:

Ներքին գործերի մինիստրութեան մէջ ստացված է միջնորդութիւն կազմակերպել զէմտվօի գործիչների համառուական ժողովընկերու այն միջոցները, որոնցով կարելի է բարեւոքել զէմտվօների ֆինանսական դրութիւնը:

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Եղանակները մեզ գնում այս տարի շատ լաւ են գնում, բայց չը նայելով դրան՝ կենսական պիտոյքները բոլորն էլ թանկ են: Ազգաբնակիչները յայտ զննելով երկաթուղու վրա, ամուր բաղարից փայտ չառաւ, կարծելով թէ երկաթուղին կը բերէ և աւելի էժան գնով կառուց, բայց բոլորովին հակառակն է այժմ: Թխած հացը այժմ ֆունտը ծախում են այստեղ 3 կօպ., միւր 6 կօպ., ձուկ հարիւր 1 ռ. 50 կ., իւղը պուլը 12 ռուբլի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Մօտ օրերուս ֆրանսիական կառավարութիւնը հրատարակեց Պարիզի համաշխարհային ցուցահանգէսի եկամուտի և ծախի հաշիւը: Եկամուտների համագումարը հաւասար է 114 միլիոն ֆրանկի, իսկ ծախք եղել է ընդամենը 116 միլիոն ֆրանկ: Եկամուտի գլխաւոր աղբիւրներն էին՝ 6) միլիոն ֆրանկ վիճակալի տուներից, 20 միլիոն ֆրանկ օժանդակութիւն պետական գանձարանից, 20 միլիոն Պարիզի քաղաքային վարչութիւնից և մօտ 9 միլիոն էքսպանսիաներից, որպէս տեղերի գին: Միւսների մէջ գլխաւոր տեղն են բռնում շինութիւնների կառուցման վրա գործադրված գումարները, որոնք հասնում են 89 միլիոն ֆրանկի, ապա 8½ միլիոն ծախված է որպէս վարձատրութիւն ցուցահանգէսում ծախսողներին և 13 միլիոն գործ է դրված ընդհանուր ծախքերի վրա:

—Հասագայից գրում են «С. П. ВѢДОМОСТИ» լրագիրը. «Հօլանդիայի ազգայնականութիւնը շարունակում է ամեն տեսակ ցոյցեր կազմակերպել ի պատիւ Կրիւզերի Նախագահ ընտնելու և իջլանդական մի քանի նշանաւոր քաղաքների հրաւերը և Ամստերդամից յետոյ մտադիր է այցելել Բոտոնդում: Պետութիւնների միջամտութեան հարցը հարաւաֆրիկական գործերում մնում է դեռ եւս չը լուծված, բայց այստեղ խորին համոզմունք է տիրում, թէ այդ հարցի դրական լուծումը կախված է միայն Ռուսաստանից: Հէջն որ վերջին յայտնել իր համաձայնութիւնը Հօլանդիայի միջամտութեան վերաբերութեամբ, այդ հոգ պիտու թեան ընդօրոգրութեան եղանակը իսկոյն համապատասխան կը գտնի Ֆրանսիայի, և գուցէ նոյն իսկ Գերմանիայի կողմից: Բայց պէտք է այն էլ ասել, որ ճիշդ տեղեկութիւններ ունեցող չըլաններում են թաղարում են, որ Յնզիլան, ի նկատի առնելով երեքի այժմեան դրութիւնը հարաւային Աֆրիկայում, կախառի իտալական պետութիւնների միջամտութիւնից և հայտնութիւն կատարելէ Տրանսիլանիա: Ուղիղ է, Անզիլայի ինքնապիտութիւնը սաստիկ վերաւորված է, բայց ինքնապիտութիւնից զատ այս հարցում մեծ դեր է խաղում և բարոյական ու ներթափանց յոգնածութիւնը, որ զգում է այժմ Անզիլան»:

—Կ. Պօլսի անգլիական դեսպանը մօտ օրերուս մի յայտադիր ներկայացնելով թիւրքաց կառավարութեանը, ինչիցից, որ չը նայելով Անզիլայի շատ անգամ կրկնված պահանջներին, Թիւրքեան մինչև այժմ չէ վճարել անգլիական հպատակներին այն վնասների վարձատրութիւնը, որ կրկ են նրանք հպական կոտորածների ժամանակ: Այս անգամ դեսպանը պահանջում է Բ. Դոնից անյապաղ կատարել անգլիական կառավարութեան պահանջը:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՍ ԳՈՐԵՆԱԿԱԼՈՒԹԻՆԵՐ
11 դեկտեմբերի
10ՆԳՕՆ, Կիտչենը հետադրում է Պրեսոբրայից, «Որքան հնարաւոր է դատել նայելով

գործերի այժման գրութեանը, եւ կարծում եմ, որ բոլորները փորձը ստալ զնալու կապի գաղթականութեան մէջ չիրազրոյցից: Մեր գործերը անցան երկու զորաբաժինների ետեւը: Եւ մի ուրիշ բրիտանական զորաբաժին է կազմվում եւ անյապաղ ճանապարհ կը գցվի: Բռնիքը մեծ աշակցութիւն չեն գտնում կապի գաղթականութեան մէջ: Դէպէտ գտնվում է Սենեկալի մօտ: Ֆրէնչ հաղորդում է, թէ նա վերջին երկու օրվայ մէջ ընդհարումն ունեցաւ Մազալիստերգի հարաւարդումն Բէյրի եւ Դէլաբէյի զորաբաժինների հետ եւ հալածում է թշնամուն, որ մեծ կորուստներ է ունեցել: Բռնիքական զորաբաժինը զիստաւորներից մէկը—կրտսէ—եւ մի քանի ուրիշ բռնիք գերի են առնված:

Նիւ-ԵՕՐԿ: Պեկինից ստացված հեռագիրը հաղորդում է, որ Լի-Սուեյ-Չանգ, որպէս պատասխան դեպատմանը հարցին, տեղեկացրեց նրանց, թէ, ինչպէս ինքը կարծում է, վաղը կը կարողանայ ներկայ լինել դեպատմանների ժողովին եւ ստանալ նրանցից Յիւնի հետ միասին պետութիւնների միացած յայտագիրը: Յայտագիրը նրանց կը յանձնէ սպանական դեպատմը, որպէս աւագագոյնը դեպատմական մարմին անդամներին: այդ ժամանակ կարտասանվի կարծ ճառ, որի մէջ յայտ կը յայտնվի հար եղածին չափ շուտով պատասխան ստանալու, որ պէտք է մանրակրկիտ կերպով մտածված լինի, կայսերական տունը պահպանումը ցանկութեանը եւ չը դնելու չինական ժողովրդի վրա չարազանք ծանր պայմաններ: Այսպէս մէջ յայտ կը յայտնվի, որ կայսրին ցոյց կը տրվի շուտափոյթ համաձայնութեան անհրաժեշտութիւնը: Պատասխանը սպասվում է մոտաւորապէս հինգշաբթի օրը: ՎԱՇԻՆԳՏՈՆ: Ամերիկական կառավարութիւնը կը ցանկար, որ պետութիւնները Չինաստանից պահանջէին 200 զօրվարից ոչ աւելի իբրեւ վարձատրութիւն: Միացեալ-Նահանգները ծախսել են զօրքերի տեղափոխութեան եւ ազգամտերի վրա 11 միլիոն զօրվար, որի մեծ մասը ընկնում է Չինաստանի վրա:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Դեկտեմբերի 11-ին Պետերբուրգ հասաւ Սիամի թագաւորանոց պրինց Մախասալա Վաչարաւատի, կայսրանում նրան գիտաւորից նրա եղբայր պրինց Չակրարոնսալ: Դեկտեմբերի 11-ին Յարսկոն-Սիւր հասաւ Սեծ Իշխանուհի Մարիա Պաւլովնա իր Օդոնտափառ դուստրների հետ:

12 դեկտեմբերի
ԲԵՐԼԻՆ: Լոնդոնից ստացված մամուլը տեղեկութիւններին նայելով՝ պաշտօնական հեռագիրը բռնիքների խուժման մասին դէպի կապի գաղթականութիւնը համարվում է չարազանք օպորտիւնտական Լուրերին նայելով՝ խուժումը նախօրոք պայմանաւորված էր ամբողջականորէն պարագլուխների մէջ եւ աշակցութիւն է գտնում նրանցից: Դէպի կապի գաղթականութիւնը արշաւողների թիւը 6,000 է հաշուում: Ամբողջ գաղթականութեան մէջ տիրում է ընդհանուր ապստամբութիւն եւ կապի զանազան պետական գործիչները անհրաժեշտ են համարում վերացնել սահմանազրութիւնը հինգ տարով:

ՊԵԿԻՆ: Խաղաղութեան պայմանները այսօր յանձնեցին սպանական դեպատմի ձեռքով Լի-Սուեյ-Չանգին եւ Յիւնիս Յայտագիրը, որի վրա զրկված է դեկտեմբերի 9-ի ամասհամարը, պարունակում է իր մէջ Ֆրանսիական բնագիրը, բաղկացած 1300 բառից եւ եւրօպական պետութիւնների տասնեմէկ ներկայացուցիչների ստորագրութիւնները՝ այսօրեանական կարգով: Յայտագրի չինական թարգմանութեանը մասնակցում են դեպատմների բոլոր թարգմանները:

Խորագիր՝ ԱՆԷՔՍԱՆԴԻՐ ՔԱՆԱԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍՍԱՀԱԿ ՄԷԼԻԻՐ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ԹԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ
արանով յայտնում է, թէ 1900 թւի դեկտեմբերի 16-ին ցերեկվայ ժամը 1-ին նշանակված է աճուրդ կապույտ սալու վիսօպորակի փողոցը ամբողջապէս քարելու աշխատանքները, 96,21 պազ. սածէն տարածութեամբ, 854 բուրդի գումարի Աճրդին մասնակցել ցանկացողները կարող են տեսնել պայմանագիրը վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ժամը 9-ից մինչեւ 3-ը: 1-3

ГРУЗИНСКИЙ ТЕАТРЪ
Въ Четвергъ, 14-го Декабря
ВЪ БЕНЕФИСТЪ
Г. В.

ГЕДЕВАНОВА
Съ участіемъ г-жи Н. Чхеидзе и г-на Вл. Алексѣева-Месхіява.

Представлено будетъ въ 1-й разъ новыя пьесы
I.

ТИСКИ
Драма въ 3-хъ дѣйств. Поль Эрвье, перев. И. Мачавариани

ДРУГЪ ФРИЦЪ
Ком. въ 3 хъ дѣйств. Э. Шатриана, пер. А. Цагарели

Участвуютъ: Г-жи Чхеидзе, Каргарели, Черкезова, Неберидзе; Г.г. Алексѣевъ-Месхіявъ, Свимонидзе, Гамкрелидзе, Гедевановъ, Шатиоровъ, Каадеаки и др.

Начало ровно въ 8 часовъ веч. 1-2

ԿՕՆՑԷՐՏ

Դաշնակահար Ս. Ն. ԵԱԿԻՄՕՎՍԿԻՆ
մասնակցութեամբ երգչուհի
Լ. Ֆ. ՖԵՐՏԻՆԳԻ

Թիֆլիսի ժողովարանի շինութեան մէջ կը տայ կոնցերտ, դեկտեմբերի 16-ին Բոկայ Բէկէրի: Տոմարները ծախվում են ժողովարանի շէֆ-ցարի մօտ, ամեն առաւօտեան 11-ից մինչեւ 3 ժամը եւ երեկոյեան ժամը 7-ից: 2-3

Շարունակում է
ՊՍԵՆԵՐՍՉՕՐԴ

ԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍ

VII եւ VIII գրքերի
Բ ա ժ ա ն ո ղ ա զ ր ու թ իւ ն ը

Երկու գրքի բաժանորդագրին է 3 բուրդի կարելի է ստանալ նաեւ նախօրոք գրքերը բաժանորդագրական գնով:

Դիմել Երվանդ Լալայանց, Սաբերա 5 կամ Սեմենարիա Ներսիսյան. Թիֆլիս. 4-15 (ե. ո.)

Բ ժ ի Շ Կ
Ք. Օ Հ Ա Ն Ե Ա Ն
ԲԱԳԻՈՒՄ

Հնդուում է ժամը 10-12 առաւօտեան եւ 5-7 երեկոյեան

Մանագիրտութիւն՝ աչքի հիւանդութիւններ: Հասցէ՝ Բագրիբոկի սկիւր, տուն Բագրիբոկի: Բաքու. Բագրիբոկի սկւր, Բ. Բագրիբոկի: 11-10

Կրանովոյսկի հայոց աղօթատան համար հարկաւոր է եկեղեցական երգչեղութեան արուեստին հմուտ մի երիտասարդ տիրացու: Պայմանները մասին դիմել Կրանովոյսկի, երէցիկու Աբրահամեանցին: 2-3

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլտուութեամբ: Մեծ արկղիկը 5 բուրդի, փոքրը—3 բ. և 1 բ. 50 կ:



ՊԻՓԼԻՍԻՆԻ
ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուցցնելու և ամբարջնելու համար, ոչնչացնում է թեփը: Գուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ՁՈՒՒ ԿԱՔԸ

Երեսին քնքշութիւն և սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արևի պատճառած սևութիւնը, մուգեքը, տալիս է կաշուին քնքշութիւն և սպիտակութիւն: Այդ գնեքը չարաւոր են. մեծ սրտակեր, արկղիկի մէջ, 2 բուրդի, փոքրը—1 բ. 50 կ. Մախվում են բոլոր պարֆիւմերական և դեղալեզանուական խանութներում: Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրբանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայելեան փողոց և Բագուում. նաև Միքայելեան կամուրջի վրա, Պապովի և Արիտակովի դեղատներում: Օտարաքաղաքացիները այստուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: 24-100

Բ Ա Յ Վ Ա Ժ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ն Գ Ի Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
ԱՌԱՋԻԿԱՅ 1901 ԹԻԱԿԱՆԻ

„ՄՈՒՐՁ“

Գ Ր Ա Կ Ա Ն, Հ Ա Ս Ա Ր Ա Կ Ա Կ Ա Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն
Ա Մ Ս Ա Գ Ր Ի

Խմբագրութեան և մշտական աշխատակիցների նոր կազմով:
Խմբագրութեան անդամներն են՝ պ. պ. Լ Ե Ի Ո Ն Ս Ա Ր Գ Ս Ե Ա Ն Ց Ե Լ Է Օ:
«Մուրճ» ամսագիրն ունենալու է հետևեալ բաժինները. 1) Վէպեր, պատմութեան, գրքավա. 2) Բանաստեղծութիւններ. 3) Նորութիւններ առաջ եւ արտասահմանեան գրականութիւնից. 4) Գիտնականութիւն եւ գրախօսութիւն. 5) Ներքին քրօնիկ. 6) Արտաքին տեսութիւն. 7) Նամակներ արտասահմանից. 8) Գաւառական կեանք. 9) Տնտեսական հարցեր. 10) Գիտութեան, դեղագրութեան եւ տեխնիկայի աշխարհից. 11) Յայտարարութիւններ:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Գ Ն Գ Ի Ն Ը.
Ռուսաստանում տարեկան 10 բուրդի, արտասահման՝ 30 ֆրանկ
» կէս տարվան 6 » » 18 »
» 1 ամսական 1 » » 3 »

«Մուրճ» ամսագիրն կարելի է գրվել. Թիֆլիսի ՄՈՒՐՁ-ի խմբագրատանը (Երևանեան հրապարակ, տուն ա. Խարազեանի): Խմբագրատունը բաց է առաւօտեան ժամը 10-ից—2-ը, բացի կիրակի եւ տօն օրերից:
ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ԱՅԼ ՏԵՂԵՐԻՑ պէտք է դիմել. Թիֆլիս, թագաւոր յարկա յարկա «Մուրճ».
ԱՐՏԱՍՍՀՄԱՆԻՑ՝ Tiflis, Rédaction de la revue «Mourch».

2-3 Հրատարակիչ և ժամանակաւոր խմբագիր՝ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿՐԱՍՆԻՆԿԵԱՆՑ

Բ Յ Կ Ա Պ Ե Տ
ԳԵՈՐԳ ԹԱԴԵՈՍԵԱՆ

Ներքին եւ երկաւայոց հիւանդութիւններ:
Հնդուում է հիւանդներին ամեն օր, առաւօտեան 9—11 ժ., երեկոյեան (բացի կիրակի օրից) 5—7 ժ.: Վերամիջօդկայա փողոց, տ. № 24: (ե. չ. չ.) 15-20

Տ Ի Գ Ր Ա Ն Յ Ո Վ Հ Ա Ն Ն Ի Ս Ե Ա Ն Ի
ԱՌՁԵՈՆ

Ռ Ո Ւ Ս Ն Ա Յ Ե Ր Է Ն Բ Ա Ռ Ե Ր Ե Ն Ը

Երբ կը տեսնի ամբողջովին եւ ոչ մաս-մաս, ուստի առաջին մասի բաժանորդները խնդրվում է յայտնել իրանց նոր հասցէները եւ այն ծախսերը, որ արել են բաժանորդագրին ուղարկելու համար, որպէս զի յետ ստանան բաժանորդագիրը եւ ծախսերը: Դիմել—Թիֆլիս, Գրաֆսկա № 7, Երվանդու յովբրեոմու Կիգրու Ներսիսի յոաննիսյու: 4-5

ОТКРЫТА ПОДПИСКА на 1901 ГОДЪ
(III годъ изданія)
НА ГАЗЕТУ
„НЕФТЯНОЕ ДѢЛО“

Изданіе Совѣта съѣзда нефтянпромышленниковъ въ Баку.
Выходить 2 раза въ мѣсяцъ по слѣдующей программѣ:

1. Указонія и распоряженія Правительства, касающіяся нефтяной промышленности.
2. Самостоятельныя статьи, посвященныя нефтяной промышленности и другимъ связаннымъ съ нею вопросамъ, каковы: судоходство, пути сообщенія, тарифы, кредитъ и т. п.
3. Хроника нефтяного дѣла: буреніе, добыча нефти, заводская ея переработка, вывозъ и торговля нефтяными продуктами.
4. Новості техники нефтяного дѣла.
5. Статистика нефтяного дѣла.
6. Обзоръ печати: свѣдѣнія и мнѣнія другихъ изданій по вопросамъ нефтяной промышленности и ихъ критическая оцѣнка.
7. Корреспонденціи и телеграммы изъ нефтяныхъ районовъ и центровъ нефтяной торговли.
8. Нефтяная биржа: цѣна на нефтяные продукты, состояніе рынковъ, акціи нефтянпромышленныхъ обществъ и общія биржевыя свѣдѣнія.
9. Положеніе, нужды и статистика рабочаго населенія и служащихъ бакинскаго промыслового района.
10. Несчастные случаи и пожары на нефтяныхъ промыслахъ, заводахъ, складахъ, станицахъ, пристаняхъ, судахъ и повздахъ.
11. Отчеты нефтянпромышленныхъ фирмъ.
12. Библиографія: рецензіи о книгахъ и статьяхъ по нефтяной промышленности и вопросамъ, имѣющимъ связь съ нею.
13. Смѣсь: мелкія новости изъ нефтяного міра.
14. Отчеты о съѣздахъ нефтянпромышленниковъ.
15. Представительская дѣятельность Совѣта съѣзда нефтянпромышленниковъ: ходатайства, отзвыи, мнѣнія и переписка Совѣта по вопросамъ о нуждахъ нефтяной промышленности съ правительственными и общественными учрежденіями.
16. Хозяйственная дѣятельность Совѣта по благоустройству бакинскаго промыслового и заводскаго районовъ: врачебное дѣло, народное образованіе, пути сообщенія, осушеніе промысловыхъ, пожарное дѣло, общественныя сооруженія, приходъ и расходъ суммъ съѣзда и пр.
17. Объявленія о предметахъ, имѣющихъ связь съ нефтяной промышленностью.

Подписная цѣна съ доставкой: на годъ 10 р., на 6 мѣсяцевъ 6 р., на 3 мѣсяца 4 руб.

Подписка принимается въ г. Баку, въ редакціи, въ помѣщеніи Совѣта съѣзда нефтянпромышленниковъ
Объявленія принимаются тамъ-же.
Редакторъ П. О. Гукасовъ.

ТРЕБУЙТЕ ВЕЗДѢ
ШОКОЛАДЪ СІУ
М. 9,730
ФАБ. С. СІУ И К. МОСКВА. (3)

Ս արգիս Վ. Արրաիսիսի

Հասցէ. ՍՈԼՈՒԿ, Գանձակալեա փող. տ. Թամամշէյի, № 26, բն. № 9.

Հ Ա Շ Ո Ւ Ե Պ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

- 1) Կրկնակի իտալական հաշուապահութիւն իր բոլոր ձեւերով. գիւղատնտեսական, նաւթարդիւնարական, գործարանական, առեւտրական, բանկային եւ շոգե-նաւային հաշուապահութիւն:
 - 2) Առեւտրական թուարանութիւն.
 - 3) Առեւտրական թղթակցութիւն.
 - 4) Պարտածուրակի օրէնքները.
 - 5) Գեղագրութիւն, ուսումնասիրութիւն զանազանատեսակ շրթանների եւ ուղղուն ամենամալատ ձեռքերի:
- ԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԸՆԹԱՑԻՔ ՍԿՍՎԵԼՈՒԻ Ե ԹՈՒՆՎԱՐԻ 15-ԻՑ
Կարելի է տեսնել առաւօտեան ժամը 9-ից մինչեւ 11-ը եւ 4-ից մինչեւ 7-ը երեկոյեան: (չ. ո. չ.) 11-25